

Տ. ԱՐՇԵՆ ԱՔԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(10 նոյեմբերի 2002 թ.)

«Մի՛ երկնցիր, բայց միայն հաւատայ»:

«Մի՛ վախեցիր, այլ միայն հավատա»:

(Մարկ. Ե 36)

Միքելի հավաքացյալ քույրեր և եղբայրներ, այս խոսքերը վերցված է այսօրվա ավելաբարանական ընթերցվածից, որում ներկայացվում է հավաքով փրկվելու ճանապարհը, և մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի խոսքերն են՝ ուղղված Հայրոս անունով մեկին, որ մեծահարուստ էր և ուներ մահամեծ մի դուստր:

Ավելաբարանը և ընդհանրապես Աստվածաշունչ Մաքյանը գրվել է մեր հավաքը գորացնելու նպատակով, մեր մեջ հավաքը արծարծելու համար: Եվ ահա ավելաբարանական այս դրվագը ևս մեկ անգամ գալիս է նորից ու նորից հավաքի կարևորությունը մեր կյանքում ապացուցելու, ցույց տալու հավաքի դերը մեր կյանքում: Հիսուս Քրիստոս փառքեր բժշկումներ էր կատարում Հրեաստանի փառքեր շրջաններում և նրանց հոգիներում արծարծում հավաքը առ Աստված:

Ահա այդ շրջագայություններից մեկի ժամանակ, երբ Նա գտնվում էր Կափառնայում բաղաբնույթ, Հիսուսին շրջապատել էր ողջ ժողովուրդը և, լսելով Նրա փառքը, գալիս էին փառքեր հիվանդություններ և մարմնական ու հոգևոր արարքներ ունեցող մարդիկ և, Հիսուսից բժշկություն խնդրելով, բուժում էին գտնում: Եվ ահա Նրա կատարած հրաշագործությունների մասին լսելով՝ Հայրոսը, որ մեծահարուստ էր, և որի 12-ամյա աղջիկը մահամեծ վիճակում էր, գալիս և Հիսուսին խնդրում է, որ այցելի իր տուն և գտնե Իր ձեռքը դնի իր աղջկա վրա, և աղջիկը կառողջանա:

Հիսուս, անշուշտ, չի մերժում և գտնում է Հայրոսի տուն: Սակայն, մինչ այդ բազմություն է հավաքվում Նրա շուրջը, և մի հրաշք ևս տեղի է ունենում այս ընթացքում, որ նույնպես գալիս է լրացնելու այս պատմության իմաստը, այն է՝ որ հավաքով գորացողը, հավաքով դիմողը, հավաքով փնտրողը կգտնի իր ուզածը և իր նպատակին կհասնի: Միայն թե վստահի Տիրոջը, և իր անելիքը Տիրոջով կօրհնվի:

Շուրջ 12 փարիներ արյունահոսությամբ փառապող մի կին, ժողովրդի միջից անցնելով, մարդկության բազմության միջից հասնում է Հիսուսին և, թերևս իր հիվանդությունը չուզենալով բոլորին ներկայացնել, բարձրաձայն ասել, նա մտածում է, որ թեկուզև կաչեն, դիպչեն Աստծո Որդու հագուստներին, իմ հիվանդությունը կբժշկվի: Եվ նա այդ հավաքով, այդ վստահությամբ մտքներում է և դիպչում Հիսուս Քրիստոսին, Նրա հագուստներին և անմիջապես իր մեջ խաղաղություն և հանգստություն է զգում, զգում է իր բժշկվելը: Այդ զգում է նաև Հիսուս և դիմում է Իր աշակերտներին, թե՛ ո՛վ դիպավ ինձ:

Առաքյալները փարակուսում են, թե այդ ամբողջի միջից շափերը կարող էին դիպչել, ինչու է այդ հարցը փալիս Քրիստոս: Սակայն Հիսուս փնտրում է ամբողջի միջից այն մարդուն, ով հավաքվել էր դիպել Իրեն, այդ փասկայակ-հարյուրավոր մարդկանցից այն մեկին էր փնտրում, ով հավաքվել, վստահությամբ էր դիպել: Շափերն էին դիպել Տիրոջը, բայց ամեն մեկի համար չէ, որ գործություն էր ելնում Քրիստոսից, որովհետև բոլորը չէ, որ հավաքվել էին մերձենում: Եվ ահա այդ կինը, վախենալով, որ Քրիստոս կհանդիմանի իրեն, ծունկի է գալիս և ի լուր ամենքի հայտարարում իր հետ կատարված հրաշքը, և Քրիստոս ոչ թե հանդիմանում, այլ քաջալերում է, գոյեպնդում նրան՝ ասելով. «Քաջալերվիր, դուստր իմ, քո հավաքը քեզ փրկեց»:

Այնուհետև Հիսուս շարունակում է Իր ճանապարհը դեպի Հայրուսի փուն: Այդ պահին Հայրուսին ընդառաջ են գալիս և ասում, որ՝ զուր ես չարչարում Վարդապետին, որովհետև քո աղջիկն արդեն մահացել է, հոգին ավանդել: Եվ մեծ լացովն է սկսվում: Բոլորը ողբում են, լաց լինում, միայն Քրիստոս է, որ հուսադրող խոսքերով դիմում է նրանց. «Ինչո՞ւ եք խռովված ու լաց եք լինում. մանուկը մեռած չէ, այլ ննջում է» (Մարկ. Ե 39):

Հիսուս հաստատականորեն շարունակում է Իր քայլերը դեպի Հայրուսի փուն և այնպեղ երեք առաքյալների և աղջկա ծնողների ներկայությամբ բռնելով մահվան մահճում գրկվող աղջկա ձեռքից, ասում է. «Տալիթա, կոմի», որ նշանակում է՝ աղջիկ, դո՛ւ, քե՛զ եմ ասում, վեր կաց» (Մարկ. Ե 41): Եվ աղջիկը նորից կենդանանում է: Հիսուս պարզվիրում է, որ չասեն որևէ փեղ, ուրիշների մոտ և չպարմեն այս հրաշքները:

Անշուշտ, հնարավոր չէր այդ մեծագործ հրաշքները թաքցնել, և ամենուրեք փարածվում է Հիսուս Քրիստոսի փառքը, Նրա անունը:

Միքելի բուրբեր և եղբայրներ, այս պարմությունը հավաքքի և հավաքվել ապրելու մասին է: Սակայն հավաքը ինքնանպատակ չի կարող լինել. հավաքը պահանջում է նաև գործեր և հավաքը առանց գործերի, ինչպես Հակոբոս առաքյալն է ասում, ընդունայն է: Զուր է մեր հավաքը, եթե մեր հավաքքից բխող արդյունքը բարիքը չէ, եթե մեր գործերը բարիքի չեն հանգեցնում: Թեև շափերը կարծում են, թե միայն հավաքը ունենալով կարող են փրկություն և արդարություն գրկել, սակայն Աստվածաշունչը վկայում է, որ հավաքքն առանց գործերի զուր է և ունայն:

Հավաքը ունենալով Աբելը բերեց իր ընծան: Հավաքվել, հավաքքից բխած գործերով Աբրահամը արժանացավ Տիրոջ ուշադրությանը և նույնիսկ իր զավակին բերեց-մատուցեց գոհասեղանին. հավաքվել էր, որ Մովսեսը առաջնորդեց իր ժողովրդին, հրեա ժողովրդին՝ հանելով եգիպտական գերությունից:

Հրեաները, սակայն, այդ ժամանակ երկմտեցին, թերահավատություն դրսևորեցին, և այն ժողովուրդը, որ գերության մեջ էր Եգիպտոսում, պարժվեց Աստծո կողմից, որպեսզի չկարողանա փոխել խոստացված երկիրը, և այն նեղություններն ու դժվարությունները, որ հանդիպում էին, խոչընդոտ դառնում նրանց ճանապարհին, ամեն անգամ ժողովրդի անհավատության կամ թերահավատության պարճառ էին հանդիսանում, և ժողովուրդն ամեն անգամ դուրս էր գալիս և ընդվզում էր Մովսեսի դեմ՝ փնտրելով միայն մարմնավոր կերակուրը: Եվ այդ սերունդը պարժվեց և չբեռավ խոստացված երկիրը:

Այսօր՝ այս վերջին փաստաձևակը շափ նմանություններ ունի եզիպարական գերությունից հրեաների դուրս գալու հետ: Մենք էլ անկախություն ու ազատություն ենք ձեռք բերել, սակայն բազմաթիվ խոչընդոտներ ու դժվարություններ են պատում մեր ժողովրդին՝ էլ երկրաշարժ, էլ պատերազմ, փոփոխական ու սոցիալական փոփոխություններ ու նեղություններ, և շափ-շափերն ասում են, թե երանի՜ այն օրերին, այն 70-80 փոփոխություններ, երբ կուշտ էինք ապրում:

Մոռանում են սակայն, որ այդ օրերին իրենց ազատությունն ու անկախությունը կաշկանդված էր: Ինչ ունենք այսօր, չունենք անցյալ փոփոխություններ: Ու եթե հավատքով, եթե Տիրոջ հանդեպ ունեցած վստահությամբ շարունակենք մեր կյանքը, ապա վստահաբար մեր գալիքը, մեր ապագան էլ ավելի արդյունավոր պետք է լինի, քան երեկ էր, քան այսօր է:

Ներկաբար, սիրելի հավաքագյալ բույրեր և եղբայրներ, ավերարանական պատգամը մեր մտքերում ունենալով, եկեք զորացնենք մեր հավատքը՝ մշտապես աղոթքով Աստծո ներկայությունը մեր մեջ ունենալով, բարին արարելով, նեղյալին օգնելով, նեղվածին վրդարակցելով և մխիթարելով, կարողալիս ձեռք մեկնելով և անհույսին հուսադրելով: Մեր գործերը միշտ հիմնենք մեր հավատքի վրա, մեր հավատքի չոր՝ մեր Տիրոջ վրա, և վստահություն կունենանք, որ Տերը երբեք մեզ մեռնակ չի թողնի, երբեք հիվանդ չի թողնի Իրեն հուսացողին, Իրեն դիմողին, հավատքով Իրեն դիպչողին: Աղոթենք միասին, որ Աստված էլ ավելի զորացնի մեզ մեր հավատքի մեջ, ապագայի նկատմամբ ունեցած վստահության մեջ և մեր հավատավոր ժողովրդին էլ առավել հզորություն պարգևի:

Թող Աստված օրհնի բոլորիս և Իր շնորհները բերի համայն հայ ժողովրդին. ամեն: